ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

2023 -2024 ՈՒՍՏԱՐՎԱ

ԲՏՃՄ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ

ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ



ՏԱՐԵԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ՝

ԸՍՏ ԿԻՍԱՄՅԱԿՆԵՐԻ

Մեթոդմիավորման նախագահ՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԲՏՃՄ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԸ

1. Սարգսյան Անահիտ - աշխարհագրություն
2. Գևորգյան Արմենուհի –կենսաբանություն
3. Եղիազարյան Աղավնիկ – աշխարհագրություն
4. Դանիելյան Սիրանուշ –քիմիա, բնագիտություն, բնություն
5. Կարապետյան Լիլիթ – ինֆորմատիկա, ֆիզիկա, ԹԳՏԳ
6. Մարկոսյան Մարյամ - ֆիզիկա, բնություն
7. Հովակիմյան Վարդանուշ- մաթեմատիկա
8. Ադամյան Իրա - մաթեմատիկա
9. Վարդազարյան Լուսինե – մաթեմատիկա

ԲՏՃՄ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹԵՄԱՏԻԿԱՆ

№	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման պատասխանատու	Կատարման ժամկետը
1	2	3	4
1.	2022-2023 ուստարվա կատարած աշխատանքների ամփոփում և գլխավոր խնդիրների վերլուծություն:	մ/մ նախագահ	օգոստոս
2.	Կազմել 2023-2024 ուստարվա մ/մ աշխատանքային տարեկան պլանը /1 կիսա մյակ, 2-րդ կիսամյակ/, քննարկել և ներկայացնել հաստատման:	մ/մ նախագահ, անդամներ	օգոստոս
3.	Կատարել ուս.պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկությամբ ներկայացնել տնօրենությանը:	ուսմասվար, մ/մ նախագահ, անդամներ	օգոստոս
4.	Կատարել ուս.պլանով սահմանված դպրոցական բաղադրիչով ժամաքանակի բաշխման մասին առաջարկություն մանկավարժական խորհրդին:	մ/մ նախագահ, ուսուցիչներ	օգոստոս
5.	Ժամանակին ծանոթանալ ՀՀ կառավարության որոշումներին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հրամաններին, հրահանգներին և այլ նորմատիվ փաստաթղթերին: Ժամանակին կատարել նոր կրթակարգին համապատասխան ուսումնական ծրագրերում կատարված փոփոխությունների ծանոթացում և կիրառում:	մ/մ նախագահ, ուսուցիչներ	ուստարվա ընթացքում
6.	Կատարել առարկայական տարեկան թեմատիկ պլանների ստուգում, չափորոշչային պահանջների հետ համապատասխանեցում և ներկայացնել հաստատման:	մ/մ նախագահ	օգոստոս
7.	Հաճախակի կազմակերպել բնագիտամաթեմատիկական առարկաներից փոխադարձ դասալսումներ և կատարել քննարկումներ : Դասալսումները կատարել նպատակային, հիմք ընդունելով փորձի փոխանակումը և դասի որակի բարելավումը, սկսնակ ուսուցիչներին օգնություն տրամադրելը:	մ/մ նախագահ, ուսուցիչներ	ուստարվա ընթացքում
8.	Կազմակերպել օրինակելի, բաց դասեր մեթոդմիավորման անդամ յուրաքանչյուր ուսուցչի մոտ և կատարել նպատակային քննարկումներ:	մ/մ նախագահ, ուսուցիչներ	ուստարվա ընթացքում
9.	Յուրաքանչյուր դասարանում, յուրաքանչյուր առարկայից ամիսը մեկ անգամ կազմակերպել էլեկտրոնային դասեր համակարգչային կաբինետում՝ դասապրոցեսում կիրառելով տեխնոլոգիական նոր մեթոդները, ՏՀՏ-ները:	մ/մ նախագահ, ուսուցիչներ	ուստարվա ընթացքում
10.	Կատարել առաջավոր փորձի ուսումնասիրում և ներդրում, դասավանդման մեթոդների կատարելագործում:	ուսմասվար, մ/մ նախագահ	ուստարվա ընթացքում
11.	Սովորողների գիտելիքների մակարդակի ստուգման նպատակով կազմակերպել գրավոր աշխատանքների անցկացում և արդյունքների քննարկում	տնօրենություն,	յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում
12.	Կազմակերպել դպրոցական առարկայական օլիմպիադաներ: Հաջողության դեպքում սովորողներին նախապատրաստել օլիմպիադաների մարզային և հանրապետական փուլերին:	տնօրենություն, մ/մ նախագահ	Նոյեմբեր-ապրիլ

13.	Կազմակերպել ԲՏՃՄ /բնագիտամաթեմատիկական/ առարկաներից առարկայական ամիսներ: Լույս տեսցնել հետաքրքրաշարժ և ուսուցանող պատի թերթեր, պաստառներ: Կազմակերպել առարկայական միջոցառումներ:	մ/մ նախագահ, ուսուցիչներ	ուստարվա ընթացքում
14.	Բարձր դասարաններում պարբերաբար կազմակերպել քննարկումներ, կլոր սեղաններ, գիտաժողովներ և այլն, որոնք էլ ավելի կնպաստեն աշակերտների ինքնակրթության և ստեղծագործական մտքի զարգացմանը:	մ/մ նախագահ, ուսուցիչներ	ուստարվա ընթացքում
15.	Ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպել մանկավարժական-մեթոդական սեմինարներ, քննարկումներ, ընթերցումներ, զեկուցումներ: Յուրաքանչյուր ուսուցիչ ուսումնական տարվա ընթացքում պետք է հանդես գա առնվազն մեկ մեթոդամանկավարժական, առարկայական բնույթի զեկուցումով: Այն քննարկել մ/մ-ում:	մ/մ նախագահ	ուստարվա ընթացքում
16.	Ստեղծել թիմային աշխատանքին բնորոշ հանդուրժողականության և փոխադարձ օգնության դրսևորմամբ խաղաղ աշխատանքային մթնոլորտ:	մ/մ նախագահ, անդամներ	ուստարվա ընթացքում
17.	Ստուգել լաբորատոր, գործնական աշխատանքների ծրագրային պահանջների կատարողականը: Դասապրոցեսում կիրառել համապատասխան ուսումնադիտողական նյութեր, ինչպես նաև կարևորել և ապահովել տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը:	մ/մ նախագահ, ուսուցիչներ	ուստարվա ընթացքում
18.	Ստուգել թեմատիկ գրավոր աշխատանքների, գործնական գրավոր աշխատանքների կատարման հաճախականությունը և որակը:	ուսմասվար, մ/մ նախագահ	դեկտեմբեր մայիս
19.	Կազմակերպել նախապատրաստական աշխատանքներ՝ քննաշրջանը բարձր մակարդակով անցկացնելու համար:	տնօրենություն, մ/մ նախագահ, ուսուցիչներ	ապրիլ մայիս
20.	Ապահովել ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման տասը միավորային սանդղակի օբյեկտիվ կիրառումը:	մ/մ նախագահ, ուսուցիչներ	ուստարվա ընթացքում
21.	Որակավորման տարակարգ չունեցող ուսուցիչներին նախապատրաստել ատեստավորման: Նախապատրաստվել և մասնակցել ուսուցիչների կամավոր ատեստացիային:	ուսմասվար, մ/մ նախագահ	ուստարվա ընթացքում
22.	Ներառական կրթության ինտեգրում: Առպների լրացում սահմանված կարգով	մ/մ նախագահ, անդամներ	ուստարվա ընթացքում
23.	Քննարկել և որոշել ձևավորող գնահատման գործիքները, սահմանել միավորային գնահատման քանակը բանավոր հարցման և գրավոր աշխատանքների համար	մ/մ նախագահ, անդամներ	յուրաքանչյուր կիսամյակի սկզբում

ԲՏՃՄ մեթոդմիավորման նախագահ՝ Ա. Եղիազարյան

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

84. Առարկայական մեթոդական միավորումներն ստեղծվում են նույն առարկայի կամ հարակից առարկաների երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Դպրոցի բոլոր ուսուցիչների՝ առարկայական մեթոդական միավորումներում ընդգրկվածությունը պարտադիր է:

85. Մինչև հարյուր սովորող ունեցող դպրոցների ուսուցիչները կարող են ընդգրկվել մոտակա դպրոցի մեթոդական միավորումում կամ ձևավորել միասնական առարկայական մեթոդական միավորում:
86. Դասվարների համար ստեղծվում է տարրական կրթության մեթոդական միավորում:
87. Մեթոդական միավորումը՝
1) քննարկում է մանկավարժական խորհրդի կողմից փորձաքննության ներկայացված մեթոդական միավորման կազմում ընդգրկված ուսումնական առակաների հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները, մեթոդական ձեռնարկները և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին տալիս երաշխավորություններ.
2) քննարկում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը.
3) ուսումնասիրում, ընդհանրացնում է մանկավարժական առաջավոր փորձը և այն ներդնում գործնական աշխատանքում.
4) նպաստում է ուսուցիչների (դասվարների) մասնագիտական և դասավանդման որակի բարձրացմանը.
5) աջակցում է ուսուցիչներին (դասվարներին)՝ ատեստավորմանը նախապատրաստվելիս.
6) կազմակերպում է մասնագիտական, մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ, սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ.
7) ուսուցիչներին (դասվարներին) հաղորդակից է դարձնում մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպում է սեմինարներ, մանկավարժականմեթոդական ընթերցումներ.
8) սահմանված կարգով ապահովում է ուսուցիչների մասնակցությունը փորձարկվող դասագրքերի փորձաքննությանը.
9) մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկություն.
10) կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն է ներկայացնում դպրոցի տնօրենին.
11) կազմակերպում է դպրոցական առարկայական օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ և այլ միջոցառումներ.
12) սահմանված կարգով մշակում և տնօրենի հաստատմանն է ներկայացնում քննական և ստուգողական առաջադրանքներ՝ առնվազն երեք տարբերակով,
ուսումնական պլանով նախատեսված առարկաներից կազմված անհատական առարկայական պլաններ, լրացուցիչ դասընթացների ժամանակացույցներ:

88. Տարբեր դպրոցների և ուսուցիչների նախաձեռնությամբ կարող են ստեղծվել միջդպրոցական մեթոդական միավորումներ:

89. Առարկայական մեթոդական միավորումների նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Նիստերն արձանագրվում են:

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

Առաջին նիստ

(օգոստոս)

1.Մեթոդմիավորման 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:

2. 2023-2024 ուստարվա համար կատարել ուս. պլանով սահմանված դասաժամերի բաշխում և ներկայացնել տնօրենությանը:

3. 2023-2024 ուստարվա չափորոշչային և ծրագրային փոփոխությունների քննարկում և պարզաբանում:

4. Թեմատիկ պլանների ներկայացում և քննարկում:

5. Ձևավորող գնահատման գործիքների ընտրություն:

6. Բնագիտամաթեմատիկական առարկաների գործնական և թեմատիկ գրավոր աշխատանքների քանակի և բանավոր գնահատման նվազագույն քանակի որոշում՝ հիմք ընդունելով ուսպլանով նախատեսված նվազագույն պարտադիր քանակը:

7. Ուսումնական պլանով սահմանված դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման քննարկում և առաջարկությունների մշակում, ներկայացում մանկավարժական խորհրդին:

8. Բնագիտամաթեմատիկական առարկաներին հատկացվող խմբակների, նախագծային աշխատանքների, երկարօրյա պարապմունքների հարցի քննարկում:

9. Սովորողներին դասագրքերով, աշխատանքային տետրերով և այլ ուսումնական նյութերով ապահովելու հարցի քննարկում:

10. ԿԱՊԿՈՒ սովորողների ԱՈՒՊ-ների մշակման և լրացման հարցի քննարկում:

Նիստը կկայանա օգոստոսի վերջին

Երկրորդ նիստ

(սեպտեմբեր)

1.Քննարկում <<5-րդ դասարանի մաթեմատիկայի և բնության նոր դասագրքերը և ուսուցչի ձեռնարկները, կիրառման ընթացքում առաջացած դժվարությունները, առավելություններն ու խնդիրները >> թեմայով:

2.Կազմակերպել փոխադարձ դասալսումներ ուստարվա առաջին կիսամյակում՝ առարկայական գիտելիքների և մանկավարժամեթոդական փորձի փոխանակման և փոխօգնության նպատակով, ուշադրության կենտրոնում պահել սկսնակ և նոր ուսուցիչներին:

3. Ծանոթացում մասնագիտական և մանկավարժամեթոդական գրականությանը.

զեկուցում՝ <<Գնահատման նոր համակարգը: Ձևավորող գնահատում>>:

4. Էլեկտրոնային մատյանների վարման հետ կապված հարցերի քննարկում:

5. Մաթեմատիկայից 5-րդ և 9-րդ դասարաններում հայտորոշիչ գրավոր աշխատանք՝ մնացորդային գիտելիքների ստուգման նպատակով (ՆԴՎ):

6. Ընթացիկ հարցեր:

Նիստը կկայանա սեպտեմբերի վերջին

Երրորդ նիստ

(հոկտեմբեր)

1. Մանկավարժամեթոդական ընթերցում՝

<<Դասարանի արդյունավետ կառավարման վարքի ձևեր, հաղորդակցման մեխանիզմներ, հոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորման սկզբունքներ>>:

2. << Ֆիզիկա>> առարկայի դրվածքի ուսումնասիրություն դասալսումների և բաց դասերի միջոցով:

3. ԿԱՊԿՈՒ սովորողների հետ կապված հարցերի քննարկում:

4. Ընթացիկ հարցեր:

Նիստը կկայանա հոկտեմբերի վերջին

Չորրորդ նիստ

(նոյեմբեր)

1.Դպրոցականների առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի նախապատրաստում, անցկացում:

2.Գրավոր աշխատանքների քանակի ապահովման քննարկում և վերլուծություն:

3. Առարկայական նոր ՀՊՉ-ի և ծրագրերի պահանջներին համապատասխան նոր դասագրքերով 7-րդ և 5- րդ դասարաններում ԲՏՃՄ առարկանների դասավանդման ուսումնասիրություն:

4. Քննարկում՝ <<Սովորողներին տնային աշխատանքներ հանձնարարելու չափը, բարդության աստիճանը, տեսակներն ու ձևերը և դրանց արդյունավետությունը>>:

5. ԲՏՃՄ առարկաններից բաց դասերի (քիմիա), նախագծային աշխատանքների և առարկայական միջոցառումների (գիտժողով) կազմակերպում և քննարկում:

6. Ընթացիկ հարցեր:

Նիստը կկայանա նոյեմբերի վերջին

Հինգերորդ նիստ

(դեկտեմբեր)

1. Առաջին կիսամյակում կատարված աշխատանքների ամփոփում:

2. Ձևավորող գնահատման գործիքների արդյունավետության քննարկում:

3. Ծրագրերի կատարողականության հաշվետվություն, բանավոր հարցումների գնահատականների և գրավոր աշխատանքների քանակի ապահովման հարցեր:

4.Դպրոցականների առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի արդյունքների ամփոփում և մարզային փուլին նախապատրաստում:

5. Էլեկտրոնային մատյանների վարման հետ կապված հարցերի քննարկում:

6. Ընթացիկ հարցեր:

Նիստը կկայանա դեկտեմբերի վերջին

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿ

Վեցերորդ նիստ

(հունվար)

1. ԲՏՃՄ առարկանների մեթոդմիավորման երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանի տեղայնացում և հաստատում:

2. Երկրորդ կիսամյակի թեմատիկ պլանների խմբագրում, քննարկում և հաստատում:

3. ԲՏՃՄ առարկաններին հատկացված խմբակների և երկարօրյա պարապմունքների երկրորդ կիսամյակի աշխատանքների քննարկում:

4. Էլեկտրոնային դասամատյանների լրացման կարգի և ստուգումների արդյունքների քննարկում:

5.Դպրոցականների առարկայական օլիմպիադաների մարզային փուլի նախապատրաստում և մասնակցություն:

6. Քննարկում՝ <<Ուսումնական նախագծային աշխատանքի պլանը, հաշվետվությունը: Ուսումնական նախագծին ներկայացվող հիմնական պահանջները, գնահատման չափանիշներն ու սանդղակը>>:

7. ԿԱՊԿՈՒ սովորողների ԱՈՒՊ-ների քննարկում:
8. Ընթացիկ հարցեր:

Նիստը կկայանա հունվարի վերջին

Յոթերորդ նիստ
(փետրվար)

1. <<Ինֆորմատիկա>> առարկայի ուսուցման որակի ուսումնասիրություն:

2. Առաջավոր փորձի ներկայացում մանկավարժամեթոդական թեմայով ընթերցմամբ՝ <<Գնահատականի կրթադաստիարակչական ուժը>> /մաթեմատիկայի ուսուցիչ՝ Ի. Ադամյան/ :

3. Դպրոցականների առարկայական օլիմպիադաների մարզային փուլի արդյունքների ամփոփում:

4. Էլեկտրոնային դասամատյանների լրացման կարգի և ստուգումների արդյունքների քննարկում:

5. ԲՏՃՄ առարկաններից փոխադարձ դասալսումների և բաց դասերի կազմակերպում և քննարկումներ:

6. Քննարկում՝<<Վերլուծական և տրամաբանական հմտությունների զարգացումը սովորողների մոտ բնագիտամաթեմատիկական առարկաների դասերին>>:

7. Ընթացիկ հարցեր:

Նիստը կկայանա փետրվարի վերջին

ՈՒթերորդ նիստ

(մարտ)

1. <<Մաթեմատիկա>> առարկայի ուսուցման որակի ուսումնասիրություն:

2. Զեկուցում՝ <<Դասերի արդյունավետության բարձրացումը նոր մեթոդների կիրառմամբ>> թեմայով:

3. Փոխադարձ դասալսումներ փորձի փոխանակման և մանկավարժական վարպետության կատարելագործման նպատակով:

4. Ուսումնական նախագծային աշխատանքների ընթացքի քննարկում և հանրային ներկայացում:

5.ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ տարվող աշխատանքների ընթացքը:

6. Ընթացիկ հարցեր:

Նիստը կկայանա մարտի վերջին

Իններորդ նիստ

(ապրիլ)

1. <<Կենսաբանություն>> և <<Աշխարհագրություն>> առարկաների ուսուցման որակի ուսումնասիրություն:

2. Զեկուցում՝ << Մեդիագրագիտությունը դպրոցում>> (ուսուցիչ՝ Լ. Վարդազարյան):

3. Սովորողների բանավոր հարցումների գնահատականների և գրավոր աշխատանքների քանակի ապահովման հարցեր:

4. ԲՏՃՄ առարկաներից բաց դասերի, ուսումնական նախագծային աշխատանքների և առարկայական միջոցառումների (գիտժողով) կազմակերպում և քննարկում:

5. Էլեկտրոնային դասամատյանների լրացման կարգի և ստուգումների արդյունքների քննարկում:

6. Ընթացիկ հարցեր:

Նիստը կկայանա ապրիլի վերջին

Տասներորդ նիստ

(մայիս)

1.Բնագիտամաթեմատիկական մասնախմբի երկրորդ կիսամյակի և 2023-2024 ուստարվա կատարված աշխատանքների քննարկում և ամփոփում:

2. Ծրագրերի կատարողականության հաշվետվություն, առաջացած խնդիրների և բարդությունների վերլուծություն:

3. Իններորդ դասարանցիների ավարտական քննությունների հարցերի քննարկում և նախապատրաստում :

4. 8-րդ դասարաններում կենսաբանությունից գիտելիքների բանավոր ստուգում և արդյունքների ամփոփում:

5. 7-րդ և 8-րդ դասարաններում երկրաչափությունից գիտելիքների ստուգում և արդյունքների ամփոփում:

6.Դպրոցական բաղադրիչի բաշխման քննարկում և առաջարկություն մանկավարժական խորհրդին:

7. Բնագիտամաթեմատիկական առարկաների 2024-2025 ուստարվա նախնական դասաբաշխում:

8. Ընթացիկ հարցեր:

Նիստը կկայանա մայիսի վերջին

Մեթոդմիավորման նախագահ՝ Ա. Եղիազարյան